ՀԱՐՑԱԹԵՐԹ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի մարզային (քաղաքային) փուլի, 2015 թ.

9-10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ /տևողությունը 180 րոպե/

1. Արեգակի կեսօրյա դիրքը Երևանում ե՞րբ ավելի ցածր կլինի մարտի 18-ին, թե՞ 25-ին (հիմնավորել)……. 1 միավոր
2. Երկրի բնակչության թիվը 2 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20 ‰:
   Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12400 մարդ, արտագաղթը՝ 8520 մարդ:
   ա/ Որոշել բնակչության բացարձակ բնական աճը,
   բ/ Որոշել բնակչության մեխանիկական աճը……2 միավոր
3. Ի՞նչ են կամպոսը, պրերիան, պամպան և պարամոսը: Որտե՞ղ են գտնվում……1 միավոր
4. Ի՞նչ կապ կա օդի ջերմաստիճանի և մթնոլորտային ճնշման միջև:
   Հիմնավորել օրինակով……1 միավոր
5. Գտնել համապատասխանություն սյունակների միջև……1 միավոր

1. քամի	ա/ հարթավայր
2. հրաբուխ	բ/ ցունամի
3. պլատֆորմ	գ/ բարխան
4. երկրաշարժ	դ/ խառնարան

6. Գրել ստորև նշված երկրների մայրաքաղաքները……1 միավոր
   ա/ Տանզանիա գ/ Սլովենիա
   բ/ Մյանմա դ/ Նիգերիա
7. Թվարկել Արաբական թերակղզում գտնվող չորս միապետություն……1 միավոր
8. Շարքից դուրս գրել անօրգանական ծագման նստվածքային ապարները……1 միավոր
   Գրանիտ, մարմար, աղ, ավազ, բազալտ, տուֆ, կավ, կավիճ, կրաքար, պեմզա, խճաքար, տորֆ
9. Շարքից դուրս գրել տեխնիկական մշակաբույսերը……1 միավոր
   բրինձ, վարսակ, շաքարեղեգ, սեխ, բամբակենի, ցորեն, գարի, արևածաղիկ, ձմերուկ, ձիթենի
10. Թվարկել տնտեսության ոչ արտադրական ոլորտի 4 ճյուղ……1 միավոր
11. Ո՞րն է ակտիվ և պասիվ առևտրական հաշվեկշռի տարբերությունը……1 միավոր
12. Մերձհասարակածային գոտում մթնոլորտային տեղումները տարվա ո՞ր սեզոնին են գերակշռում և ինչու՞……2 միավոր
13. Թվարկել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության մեջ մտնող երկրները և նրանց մայրաքաղաքները……2 միավոր
14. Ընտրել սխալ պնդումը……1 միավոր
    ա/ Ակոնկագուա լեռը գտնվում է Անդերում,
    բ/ Չինաստանն աշխարհում առաջինն է խոզերի գլխաքանակով,
    գ/ Անդալուզիան Իտալիայի պատմական մարզ է,
    դ/ Եվրասիայի հյուսիսում Կանին թերակղզին է:

15. Ընտրել սխալ պնդումը……1 միավոր

ա/ Կոտայքի մարզի քաղաքներն են՝ Չարենցավանը, Սևանը, Նոր Հաճնը, Եղվարդը

բ/ Որոտան գետի վրա կառուցվել է ջրային էլեկտրակայանների կասկադ,

գ/ Դաստակերտը ՀՀ ամենափոքր քաղաքն է

դ/ Ծաղկաձորը ռեկրեացիայի կենտրոն է

16. Գետի ջրի արագությունը (V) 80 սմ/վ է, կենդանի կտրվածքի մակերեսը (S)՝ 1,7 մ^2:

Հաշվել թե գետով 1 օրում ինչքան ջուր է անցնում (W) (պատասխանն ստանալ հաշվարկով)…….. 2 միավոր

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի մարզային (քաղաքային) փուլի, 2015 թ.

11-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ /տևողությունը 180 րոպե/

1. 10 մլն տարի առաջ Եվրասիայի 30-45^0 աշխարհագրական լայնություններում ընթանում էին լեռնակազմական ակտիվ պրոցեսներ (երկրաշարժեր, հրաբուխներ, տեկտոնական խզումներ և այլն)……3 միավոր
   ա/ Որոշել երկրաբանական դարաշրջանը, ժամանակաշրջանը, ծալքավորությունը և գեոսինկլինալային գոտին:
   բ/ հրաբխականության հետևանքով ի՞նչ ապարատեսակներ են առաջացել (թվարկել 4 -ը),
   գ/ ռելիեֆի ի՞նչ ձևեր են առաջացել (թվարկել 4-ը):
2. Յուրաքանչյուր շարքի 4 անվանումից դուրս գրել ոչ տրամաբանականը……1 միավոր
   ա/ Մանչեստր, Կրիվոյ Ռոգ, Իվանավո, Լոձ,
   բ/ Վերին Սիլեզիա, Էկիբաստուզ, Լոթարինգիա, Կանսկ-Աչինսկ,
   գ/ Մարսել, Համբուրգ, Պրահա, Կալինինգրադ,
   դ/ Սլոխտերեն, Ուրենգոյ, Սուչան, Տազովսկոյե,
3. Կազմել «պետություն - արտահանվող ապրանքատեսակ» համապատասխան զույգերը……2 միավոր

ա/ Գանա	1. նավթ
բ/ Վենեսուելա	2. կակաո
գ/ Մալայզիա	3. ձիթապտուղ
դ/ Հունաստան	4. անագ
ե/ Սուրինամ	5. հևեա
զ/ Բոտսվանա	6. ալմաստ
է/ Արգենտինա	7. բոքսիտ
ը/ Բոլիվիա	8. գինի

4. Ո՞րն է ԱՄՆ-ի՝……2 միավոր
   ա/ մետաղածուլության մայրաքաղաքը,
   բ/ ավտոմոբիլաշինության մայրաքաղաքը
   գ/ ավիահրթիռաշինության մայրաքաղաքը
   դ/ նավթաքիմիական մայրաքաղաքը
5. Ընտրել և դուրս գրել սլավոնական լեզվախմբին պատկանող ժողովուրդները……..2 միավոր
   հույներ, ալբանացիներ, սլովեններ, բոսնիացիներ, ռումիններ, մոլդովներ, չեռնոգորցիներ, հունգարներ, սլովակներ, կարաչայներ, բալկարներ
6. Առանձնացնել Ատլանտյան օվկիանոսի ավազանին պատկանող գետերը……1 միավոր
   Չու, Պրուտ, Թերեք, Պո, Չերչիլ, Դառլինգ, Պեչորա, Չուրուն, Յանա, Վոլգա, Ճորոխ, Կոլիմա:
7. Որո՞նք են պարենային հիմնախնդրի լուծման հիմնական ուղիները……3 միավոր

8. Բուսատեսակների աճման շրջանները դասավորել արևելքից արևմուտք ուղղությամբ……..……..……1 միավոր

ա/ սեկվոյա գ/ դաուրյան խեժափիճի

բ/ փյունիկյան արմավենի դ/ բաոբաբ

9. Տնտեսության ո՞ր ճյուղերով են մասնագիտացել սկանդինավյան երկրները աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ:

Նշել 4 ճյուղ……..……..1 միավոր

10. Նշված ազգերը դասակարգել ըստ լեզվաընտանիքների և լեզվախմբերի……..2 միավոր

հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, պարսիկներ, քրդեր, արաբներ, հունգարներ, ավստրիացիներ, ֆիններ, կոմիներ, լատիշներ, կարակալպակներ:

11. Հաշվել Հայկական լեռնաշխարհի իրական տարածքը, եթե 1:3.000 000 մասշտաբի քարտեզի վրա այն զբաղեցնում 434 սմ^2

(պատասխանը ստանալ հաշվարկով)……..….. 2 միավոր